

Pub#F123.10 Armenian – March, 2020

Կորոնավիրուս (COVID-19) Կացարանային հարցեր

**Այս էջը կրթարմացվի լրացուցիչ տեղեկատվության առկայության դեպքում*

Թարմացվել է՝ 20-ը մարտի, 2020թ.

Իմացեք ձեր օրինական իրավունքները

Կացարանի պահպանումը **COVID-19** վարակով պայմանավորված իրավիճակում

COVID-19 վարակով պայմանավորված պանդեմիայի ժամանակ շատ մարդիկ են խոսում վտարումների մասին: Ոմանց հետաքրքրում է նահանգապետի խոսքը վտարումների մասին: Մյուսները ցանկանում են իմանալ, թե արդյոք նրանց այս պահին կարող են վտարել: Այս տեղեկատվական թերթիկում կխոսենք վտարումների մասին:

2020թ. մարտի 16-ին նահանգապետ Նյուսոմն ասաց, որ տեղական իշխանությունները հնարավոր է դադարեցնեն վտարումները՝ պայմանավորված COVID-19 վարակով: Նա ոչ բոլոր վտարումներն է դադարեցրել:

Այս պահին յուրաքանչյուր քաղաքում և վարչաշրջանում իրավիճակը տարբեր է: Յուրաքանչյուրն ունի բնակիչներին այս պահին վտարումների մասին տեղեկացնելու իր կարգը: Ավելին իմանալու համար ծանոթացեք ձեր քաղաքի կամ վարչաշրջանի կարգին:

Որոշ քաղաքներում և վարչաշրջաններում սահմանված կարգը վարձակալներին պաշտպանում է վտարումից, եթե նրանք կորոնավիրուսային վարակի պատճառով վարձավճար չեն վճարում:

Ահա մի քանի օրինակ, թե որ դեպքերում են որոշ տեղական իշխանություններ դադարեցրել վտարումները.

1. Երբ ձեր տնային տնտեսության եկամուտն զգալիորեն կրճատվել է, քանի որ COVID-19 վարակի հետևանքով ձեզ ազատել են աշխատանքից,
2. Եթե մեծ բժշկական ծախսեր եք կատարել ձեր սեփական գրպանից COVID-19 պանդեմիայի հետևաբով, կամ
3. Եթե պանդեմիայի հետևանքով ձեզ անհրաժեշտ է չափից մեծ խնամք երեխայի համար:

Որոշ վայրերում ճգնաժամի ընթացքում սահմանափակում են նաև «անհիմն» վտարումները:

Սա կարևոր է. **Վտարումների համար ժամկետի համընդհանուր հետաձգում չկա:** Որոշ վտարումներ, այնուամենայնիվ, իրականացվում են: Եթե ձեզ այս պահին վտարում են, պետք է անմիջապես զանգահարեք վարչաշրջան՝ պարզելու, թե ինչ պետք է անեք ձեզ պաշտպանելու համար:

Ամեն օր նոր հրամաններ են արձակվում: Մենք կփորձենք պարբերաբար թարմացնել այս հրապարակումը:

Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար, ինչպես նաև, եթե կարծում եք, որ ձեզ վտարել են COVID-19 վարակով պայմանավորված պատճառներով, խնդրում ենք անցնել հետևյալ հղումներով՝

Նահանգապետ Նյուսոմի թիվ 28-20 հրամանը.

<https://www.gov.ca.gov/wp-content/uploads/2020/03/3.16.20-Executive-Order.pdf>

քաղաք Ալամեդա՝

<https://tinyurl.com/ujqm2ed>

քաղաք Ֆրեզնո՝

<https://tinyurl.com/t5ys8wn>

քաղաք Լուս Անջելես՝ <https://tinyurl.com/wu9yrrw>

քաղաք Փասադենա՝
<https://tinyurl.com/r2asecy>

քաղաք Ռիչմոնդ՝
<https://tinyurl.com/rll3de>

քաղաք Սակրամենտո՝ <https://tinyurl.com/rttkvd9>

քաղաք Սան Ֆրանցիսկո՝ <https://tinyurl.com/tbky88h>

Սան Լուիս Օբիսպոյի վարչաշրջան՝ <https://tinyurl.com/vzsvmws>

քաղաք Սանտա Մոնիկա՝ <https://tinyurl.com/qt3etz7>